**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 100

*22 փետրվար 2021թ.*

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Գալիտա>> Փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվետվությունը համայնքապետարան ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ՝ 07.02.2021 թվականին հանձնվել է <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության բաժանմունք:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենքգրքի $169^{1}$-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի $169^{1}$-րդ հոդվածի 2-րդ մասով $219^{1}$-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 04 նիստի արձանագրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Գալիտա>> Փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ /ՀՎՀՀ 00055738, հասցե՝ Արագածոտնի մարզ, գյուղ Բազմաղբյուր, 11-րդ փողոց թիվ 6/ գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելու համար, նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 101

*22 փետրվար 2021թ.*

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Արմեն Սեդրակյանին /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, թիվ 2/ տրամադրել՝

1) 2021 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 55.5 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 102

*22 փետրվար 2021թ.*

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Անհատ ձեռնարկատեր Հայկազ Ռոբերտի Դանոյանին /գործունեության հասցեն` ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 38/ տրամադրել`

1) 2021 թվականի 1 -ին եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն` 650 քմ տարածքում,

2) 2021 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն` 650 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 103

*22 փետրվար 2021թ.*

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետով՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Վահան Բաղդասարյանին /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Նոր թաղամաս, 3-րդ փողոց, թիվ 6 / տրամադրել՝

1) 2021 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 143 քմ տարածքում,

2) 2021 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքների վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 143 քմ տարածքում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 104

*22 փետրվար 2021թ.*

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԲՈՆԱ ՎԻՏԱ>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Ավետիք Իսահակյան փողոց,թիվ 14 / տրամադրել՝

1) 2021 թվականի 1- ին եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 450 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 105

*22 փետրվար 2021թ.*

### ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ,ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ,24:00-ԻՑ ՀԵՏՈ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՍԱՈՒՆԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 11 կետերով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԲԻ ԸՆԴ ԲԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց 18/2 / տրամադրել՝

1) 2021 թվականի ընթացքում 164 քմ տարածքում հանրային սննունդ կազմակերպելու թույլտվություն,

2) 2021 թվականի ընթացքում 94 քմ տարածքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն,

3) 2021 թվականի ընթացքում ժամը 24:00-ից հետո հանրային սնունդ կազմակերպելու թույլտվություն,

4) 2021 թվականի ընթացքում սաունայի գործունեություն կազմակերպելու թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 106

*22 փետրվար 2021թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԲԻ ԸՆԴ ԲԻ>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 18/2 հասցեում՝ 2 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 107

*23 փետրվար 2021թ.*

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՓԱԲ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի հունվարի 01-ից առանց թույլտվության Քաղաք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցի փողոց 17/1 հասցեում գտնվող օբյեկտում իրականացվում է հանրային սննդի կազմակերպում և իրացում և ոգելից խմիչքների մանրածախ վաճառք :

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենքսգրքի $169^{16}$-րդ հոդվածի 1-ին մասի և 9-րդ մասի հատկանիշներով Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի $169^{16}$ -րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերով, $219^{1}$-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 23-ի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. << <<ՓԱԲ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ /տնօրեն՝ Հաբեթ Դովլաթյան, ՀՎՀՀ 02818111, հասցե՝ քաղաք Երևան, Սարյան փողոց թիվ 26/16/ նշանակել վարչական տուգանք՝

1) առանց թույլտվության ոգելից խմիչքների մանրածախ վաճառք իրականացնելու համար՝ 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով,

2) առանց թույլտվության հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու համար՝ 80.000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով :

2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքիբյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5.Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 108

*23 փետրվար 2021թ.*

## ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> օրենքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի 1233-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 37-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138 -րդ կետերով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիսի 27-ի թիվ 140 որոշմամբ հաստատված ներքին աուդիտի կանոնակարգի 25-26-րդ կետերը և Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 02/20 նիստի արձանագրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վավերացնել Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի 2021-2023 թվականների ռազմավարական ծրագիրը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Վավերացնել Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Ծաղկաձորի համայնքի ղեկավար
Ա. Հարությունյան

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Ծրագրի առաջին տարի՝ **2021 թվական**
Ծրագրի վերջին տարի՝ **2023 թվական**

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների,Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

2. Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ:

3. Այն հանդիսանում է Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

4.Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Ծաղկաձորի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

5.Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Ծաղկաձոր համայնքի ղեկավարի հետ:

6.Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

## II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7.Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Ծաղկաձորի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Ծաղկաձորի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

8. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման պարտականություններ իրականացնողի առաքելությունն ու խնդիրներն են.

1)օժանդակել Ծաղկաձորի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

2)օժանդակել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3)տրամադրել վերահսկող մարմիններին Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4)օժանդակել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5)իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6)ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

## III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9. Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով աուդիտի միավորների կողմից ներկայացված ռիսկերի գնահատումները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, փոփոխությունները:

## IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

10. Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կազմակերպվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն հրամաններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ: Ծաղկաձորի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

11. Ներքին աուդիտի բաժնի հետագա զարգացման համար բաժինն իրականացնում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտի մեթոդաբանության, ներքին աուդիտի ստանդարտների և ներքին աուդիտորների վարքագծի կանոնների պահանջների կատարում: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի ներքին աուդիտորի մասնակցությունը լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

| Միավոր | Տարի | Ժամկետ (մարդ/օր) | Աուդիտի տեսակ | Ռիսկի խումբ |
|---|---|---|---|---|
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2021 | 180 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2022 | 180 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2023 | 180 | Ֆինանսական աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ | 2021 | 120 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ | 2022 | 120 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ | 2023 | 120 | Ֆինանսական աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի Նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ | 2021 | 100 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի Նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ | 2022 | 100 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի Նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ | 2023 | 100 | Ֆինանսական աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 2021 | 70 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 2022 | 70 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 2023 | 70 | Ֆինանսական աուդիտ | Միջին |
| Ծաղկաձորի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2021 | 140 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Ծաղկաձորի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2022 | 140 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| Ծաղկաձորի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2023 | 140 | Ֆինանսական աուդիտ | Միջին |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2021 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2022 | 20 | Կատարողականի աուդիտ | Ցածր |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2023 | 20 | Ֆինանսական աուդիտ | Ցածր |

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Բաբայան

02591995 "ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ" "ПЕРФЕКТ АУДИТ" "PERFECT AUDIT"

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ
Ծաղկաձորի համայնքի ղեկավար
Ա. Հարությունյան

# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Տարի՝ **2021 թվական**

## *I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

1. Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների:

2. 2021 թվականի տարեկան ծրագիրը կազմվել է Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի 2021-2023 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա: Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել 2021 թվականի ընթացքում:

3. Տարեկան ծրագիրը սահմանում է 2021 թվականի ընթացքում Ծաղկաձորի համայնքապետարանում իրականացվող ներքին աուդիտի առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

## *II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

4. Ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան ծրագիրը նախատեսվում է իրականացնել հրավիրված ներքին աուդիտորի և անհրաժեշտության դեպքում ներգրավված փորձագետների միջոցով: Ներքին աուդիտորն ապահովում է տարեկան ծրագրի իրականացումը մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան:

## *III. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ*

5. Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտորը մշակում և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում 2021 թվականի Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտորի կողմից և վավերացվում Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից:

## *IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ*

6. Ծաղկաձորի համայնքապետարանի ներքին աուդիտորի հետ փոխկապակցված գործունեության տեսակներն են՝

1)շարունակական մասնագիտական վերապատրաստումը,

2)ներքին աուդիտի վերաբերյալ սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

## *V. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ*

7. Ծաղկաձորի համայնքապետարանում ներքին աուդիտի ստորաբաժանման, այդ թվում ստորաբաժանման ղեկավարի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից, որը

կհանդիսանա ներքին աուդիտի ծառայությունների ձեռք բերման համար գնանշման հարցման ընտրված մասնակից:

## VI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Կարևոր է, որ հաշվետվությունները լինեն արդյունավետ՝ Ծաղկաձորի համայնքապետարանի գործունեության բարելավմանը նպաստելու և Ծաղկաձոր համայնքի համար հավելյալ արժեք ստեղծելու նպատակով:

9.Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է Ծաղկաձոր համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի տարեկան հաշվետվություններ, որոնք ամփոփում են տարվա ընթացքում կատարած ներքին աուդիտի բաժնի գործունեությունը:

10.Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է Ծաղկաձոր համայնքի ղեկավարին ներկայացնի առաջադրանքի հաշվետվություններ, որոնք լինում են միջանկյալ, նախնական և վերջնական:

11.Ներքին աուդիտի բաժնի պետը ներքին աուդիտի բաժնի ստեղծման, վերակազմակերպման կամ փոփոխության դեպքում պետք է Լիազոր մարմնին ներկայացնի հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 1-ին ձևով՝ ներքին աուդիտի ստորաբաժանման գրանցման, վերակազմակերպման կամ փոփոխության վերաբերյալ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

12.Ներքին աուդիտի բաժնի պետը ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Լիազոր մարնին ներկայացնի հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով:

13.Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է տարեկան մեկ անգամ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի հաշվետվություն Լիազոր մարմնին ներքին աուդիտորների պաշտոնի նշանակման, փոփոխության, որակավորումների և վերապատրաստումների, ինչպես նաև ներքին գնահատումների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 3-րդ ձևով:

14.Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս են կազմում նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածում ներկայացված աղյուսակները: Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է գործունեության տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները աղյուսակների հետ մեկտեղ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի Լիազոր մարմնին, որոնք կազմում են «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

| Հ/Հ | Միավոր | Աուդիտի տեսակ | Խորհրդ[illegible]տվության տեսակ | Պլանա-վորված օրերի քանակ | Սկզբի ամսաթիվ | Ավարտի ամսաթիվ | Գործընթաց | Կցված աշխատակից | Պաշտոն | Ընդա[illegible] մարդ/օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | Համապատաս խանության աուդիտ | | 180 | 01/01/2021 | 31/12/2021 | Աշխատակիցների աշխատանքի ընդունում և ազատում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Համայնքապետարանի ակտիվների և պարտավորությունների գույքագրում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 30 |
| | | | | | | | Ապրանքանյութական պաշարների շարժի փաստաթղթավորման իրականացում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Աշխատավարձերի հաշվարկում, հաշվառում և վճարում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմման գործառույթ | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Կատարված ծախսերի փաստաթղթավորում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Տեղական տուրքերի և հարկերի գանձում, առևտրի և սպասարկման ոլորտին առնչվող գործառույթներ | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Հողային օրենսգիրք, քաղաքաշինական և հողաշինական գործառույթներ | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | Կատարողական աուդիտ | | | | | Բյուջետավորման գործընթաց | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| 2 | « Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ | Համապատասխանության աուդիտ | | 120 | 01/01/2021 | 31/12/2021 | Աղբահանության վճարների հավաքագրման և հաշվառման գործառույթ | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 30 |
| | | | | | | | Կատարված ծախսերի փաստաթղթավորում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 30 |
| 3 | «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ | Համապատասխանության աուդիտ | | 100 | 01/01/2021 | 31/12/2021 | Հաշվապահական հաշվառում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Կադրերի հաշվառում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Կատարված աձախսերի փաստաթղթավորում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Բժշկական փաստաթղթերի հաշվառում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Սննդամթերքի մենյու-պահանջագրերի կազմման և ծախսման գործառույթ | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | « Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ | Համապատաս խանության աուդիտ | | 70 | 01/01/2021 | 31/12/2021 | Հաշվապահական հաշվառում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Կադրերի հաշվառում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Կատարված աշխատանքների փաստաթղթավորում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Բժշկական փաստաթղթերի հաշվառում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Վարձավճարների հաշվառում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 10 |
| 5 | Ծաղկաձորի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | Համապատաս խանության աուդիտ | | 140 | 01/01/2021 | 31/12/2021 | Պայմանագրերի կնքման և կատարման գործառույթ | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 50 |
| | | | | | | | CPV կոդերի կազմում | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 50 |
| 6 | Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | Համապատաս խանության աուդիտ | | 20 | 01/01/2021 | 31/12/2021 | Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | Արտապատվիրա կված անձ | Ներքին աուդիտոր | 20 |

**«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ տնօրեն՝** **Ա. Բաբայան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 109

*24 փետրվար 2021թ.*

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Էլիսա Ռեզորտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2020 թվականի 2-րդ կիսամյակի գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվետվությունը համայնքապետարան ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ՝ 19.02.2021 թվականին:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենքսգրքի $169^{1}$-րդ հոդվածի 2-րդ մասով հատկանիշներով Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի $169^{1}$-րդ հոդվածի 2-րդ մասով $219^{1}$-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 12-ի թիվ 05 նիստի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. <<Էլիսա Ռեզորտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ /ՀՎՀՀ 03019589/ գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելու համար, նշանակել վարչական տուգանք 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքիբյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 110

*24 փետրվար 2021թ.*

ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գարիկ Բադալյանին, համայնքի ավագանու անդամներ Արմենուհի Առաքելյանին և Կարեն Հովհաննիսյանին 2021 թվականի փետրվարի 25-ին գործուղել Հայաստանի համայնքների միության Վիշեգրադի միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվելիք <<Համագործակցություն հանուն քաղաքների կայուն զարգացման,ընդհանուր մարտահրավերներ և ընդհանուր լուծումներ>> ծրագրին մասնակցելու համար:
2. Գործուղման ծախսերը հոգում է Ծաղկաձորի համայնքապետարանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 111

*26 փետրվար 2021թ.*

ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Իվետա Հայկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական N2517966 տրված 2008 թվականի մարտի 25-ին) 67.93 քառ.մ. մակերեսով շինությանը տրամադրել հասցե ՝ Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց 13 շենք թիվ 2:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 112

*26 փետրվար 2021թ.*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ծաղկաձոր համայնքի Միեր Մկրտչյան փողոց 23/4 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա Միհրան Իգմիրի Աղաբեկյանի կողմից ինքնակամ կառուցված 7,93 ք.մ. արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2.Շինությունը և շինության սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 0,000793 հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքի սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 113

*26 փետրվար 2021թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,000793 հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Միեր Մկրտչյան փողոց 23/4:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 03001885 ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 114

*26 փետրվար 2021թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,002289 հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Օրբելի եղբայրների նրբանցք 21:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 115

*26 փետրվար 2021թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,00395 հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Օրբելի եղբայրների նրբանցք 23/1:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 116

*26 փետրվար 2021թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,03935 հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Տանձաղբյուրի փողոց 34/3:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 117**

*26 փետրվար 2021թ.*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Ծաղկաձոր համայնքի Տանձաղբյուրի փողոց թիվ 34/3 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա Ռոզա Գագիկի Ծառուկյանի կողմից ինքնակամ կառուցված 92,9 ք.մ. արտաքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական:

2.Շինությունների և շինությունների սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 0,03935 հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքի սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 118

*26 փետրվար 2021թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ծաղկաձոր համայնքի Օրբելի եղբայրների նրբանցք թիվ 21 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա Արշավիր Ժիրայրի Առաքելյանի կողմից ինքնակամ կառուցված 49,47 ք.մ. արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

2.Շինությունը և շինության սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 0,002289 հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքի սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 119

*26 փետրվար 2021թ.*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ծաղկաձոր համայնքի Օրբելի եղբայրների նրբանցք թիվ 23/1 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա Սամվել Ռուբենի Մամիկոնյանի կողմից ինքնակամ կառուցված 68,36 ք.մ. արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

2.Շինությունը և շինության սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 0,00395 հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքի սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ